ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք.Երևան, Արգիշտիի 1

№ 61/7 26 «06» 07 2017թ.

«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ն. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ
ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ,
Օգոստոսի 23 փող., 21/3ա

Երևանի քաղաքապետարանի և «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 21.02.2017 թվականին կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/43» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների վերանորոգման ու պահպանման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է «Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ»:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

Վերը նշված կետի համաձայն՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից 06.04.2017 թվականին կատարված շրջայցերի արդյունքում հայտնաբերվել է, որ Կատարողը խախտել է N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների պայմանները, այն է՝ Կատարողը չի ապահովել (6-րդ չափաբաժնի մասով) տեխ. հսկիչի մշտական ներկայությունը շինարարական օբյեկտում, ինչպես նաև վերը նշված շրջայցերի ընթացքում արձանագրվել է այլ պայմանագրային խախտում, որի վերաբերյալ կազմված համապատասխան արձանագրությունը աշխատակազմի ֆինանսական վարչության պետի կողմից 06.04.2017 թվականի հ. 09/1482 գրությամբ տրամադրվել է Ձեզ:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերը նշված ստորաբաժանման աշխատակիցների կողմից 29.06.2017 թվականին կատարված շրջայցերի արդյունքում հայտնաբերվել է, որ Կատարողը կրկին խախտել է N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների պայմանները, այն է՝ Կատարողը չի ապահովել (6-րդ չափաբաժնի մասով) տեխ. հսկիչի մշտական ներկայությունը շինարարական օբյեկտում, ինչպես նաև վերը նշված շրջայցերի ընթացքում արձանագրվել է այլ պայմանագրային խախտում, որի վերաբերյալ կազմված համապատասխան արձանագրությունը էլեկտրոնային փոստով տրամադրվել է Ձեզ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, պայմանների

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ «Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով»:

Պայմանագրի 2.1.3 կետի ա/ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի «Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում եմ Ձեզ սույն Պայմանագիրը՝ 6-րդ չափաբաժնի մասով միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, որը նաև օրենսդրական պահանջի համաձայն հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում, ստանալու օրվա դրությամբ վճարել Պայմանագրի 5.2 կետով հաշվարկված տույժը՝ 1490 (մեկ հազար չորս հարյուր իննսուն) ՀՀ դրամ, որը հարկավոր է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900015211429 հաշվեհամարին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Գ. ՉԹՐՅԱՆ**

Կատարող՝ Գ. Մուրադյան
011 514-373